

## Բրուցեյոզ

**Հիվանդության բնորոշումը.** Բրուցեյոզը խրոնիկ ընթացքով ինֆեկցիոն հիվանդություն է, որը դրսևորվում է վիժումներով, ընկերքի պահումով, էնդոմետրիտներով (արգանդի բորբոքում) և կենդանիների վերարտադրական կարողությունների խանգարումներով, ինչպես նաև այլ օրգան-համակարգերի ախտահարումներով:

**Հարուցիչը.** Հայտնի են բրուցելաների 6 տեսակներ. B. abortus-ը համարվում է խոշոր եղջերավոր կենդանիների հարուցիչը, իսկ B. Melitensis-ը ոչխարների այծերի և մարդկանց հարուցիչը:

Մանրէն եռացնելիս ոչնչանում է անմիջապես, պանրի, յուղի, աղ դրած կաշվի մեջ պահպանվում է 67 օր, աղացած մսի մեջ՝ 3 ամիս, սառեցրած մսում՝ 5 ամիս, հողում, ջրում և գոմաղբում պահպանվում է 4 ամիս:

**Հիվանդության տարածման ուղիները.** Բրուցեյոզի նկատմամբ ընկալունակ են *ցուղատնտեսական և ընտանի բոլոր կենդանիները*: Հիվանդության հարուցչի տարածման աղբյուր են բրուցելոզով հիվանդ կենդանիները:

**Հարուցիչը արտազատվում է.**

- կաթի,
- սերմնաբջիջների, պտղաջրերի, ընկերքի, պտղի,
- կղկղանքի, մեզի միջոցով:

Առավել վտանգավոր են բրուցեյոզի պատճառով վիժած կենդանիները: Կաթնազեղծում բրուցելաները կարող են պահպանվել մինչև 7-9 տարի:

**Վարակումը տեղի է ունենում.**

- ներքին ճանապարհով (կերի, ջրի միջոցով),
- սեռական ուղիներով,

### ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վարակի տարածմանը նպաստում է նաև կենդանիների բնական զուգավորումը, երբ հիվանդ է լինում ցուլը կամ նախիրից թեկուզ մեկ կով: Դրա համար ցուլ ընտրելիս նախ պետք է համոզվել, որ վերջինս առողջական լավ վիճակում է: Բրուցեյոզով հիվանդ 1 կովի կամ 1 ցուլի առկայությունը կարող է դառնալ մնացած կովերի վարակման պատճառ, հատկապես, եթե ձեր համայնքում կովերի բնական զուգավորման համար օգտագործվում է ընդամենը 1 կամ 2 ցուլ: Սեռական ճանապարհով բրուցեյոզի տարածումը բացառելու համար, պետք է կատարել արհեստական սերմնավորում:

- ամբողջականությունը խախտված մաշկով,
- չի բացառվում նաև տարածումը շնչառական ուղիներով:

Վարակի տարածումը կանխելու համար արգելվում է կովերի ծննդաբերելուց հետո ընկերքը հում վիճակում տալ շներին: Միայն եռացնելուց հետո է միկրոբը ոչնչանում և ընկերքը դառնում է անվտանգ:

**Կլինիկական նշանները.** Գաղտնի շրջանը տևում է 15-30 օր:

Հիվանդության կլինիկական նշանները համարյա չեն արտահայտվում: Վարակվածությունը կարելի է բացահայտել միայն ախտորոշման շիճուկաբանական և ալերգիական մեթոդներով:

Հիվանդ կովերը վիժում են հղիության երկրորդ շրջանում, հաճախ 5-8 ամսականում: Հիմնականում վիժում են երինջները (մինչև 70%), սակայն երկրորդ ծնից սկսած կովերը կարող են և չվիժել:

*Այսպիսով բրուցելյոզի ժամանակ ակնհայտ կլինիկական նշանների բացակայության պատճառով ֆերմերը կարող է և չնկատել իր տնտեսությունում առկա հիվանդ կենդանուն, ինչը մեծ տնտեսական վնասներ կարող է հասցնել ֆերմային և մարդկանց առողջությանը:*

### **Հետևաբար շատ կարևոր է.**

- առնավազն տարին մեկ անգամ իրականացել բրուցելյոզի ախտորոշում, որը ներառված է պետպատվերի մեջ,
- պահպանել սննդամթերքի օգտագործման անվտանգության կանոնները (տես աղյուսակ 3):

**Կանխարգելումը և պայքարի միջոցառումները.** Բրուցելյոզի դեմ վակցինացում չի արվում: Պետպատվերի շրջանակներում տարին երկու անգամ իրականացվում է բրուցելյոզի ախտորոշում:

Կենդանիների բրուցելյոզի դեմ պայքարի միջոցառումներին են վերաբերում.

1. Տնտեսությունների, բնակավայրերի պահպանումը բրուցելյոզային վարակից:
2. Բրուցելյոզի նկատմամբ անապահով տնտեսությունների և բնակավայրերի առողջացումը:
3. Մարդկանց պաշտպանումը բրուցելյոզով վարակումից:

Քանի որ, բրուցելյոզը հիմնականում սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություն է, ցանկալի է տնտեսություններում կազմակերպել արհեստական սերմնավորման աշխատանքներ: Կենդանիների մոտ բրուցելյոզ ախտորոշելու դեպքում ֆերմերը պետք է ձեռնարկի քայլեր՝ հիվանդության տարածումը կանխելու նպատակով:

### **Բրուցելյոզով կարող են վարակվել նաև մարդիկ**

#### **Վարակման ուղիները.**

- **շփումը բրուցելյոզով հիվանդ կենդանիների հետ** (հատկապես ոչխարների և այծերի): Հիվանդությամբ հաճախակի են հիվանդանում անասնաբույժները և անասնապահները, երբ ծննդօգնություն են ցուցաբերում քերծվածքներ կամ բաց վերքեր ունեցող ձեռքերով:
- **հիվանդ կենդանուց ստացված սննդամթերքի օգտագործումը** (բրուցելյոզը կարող է փոխանցվել կաթի, կաթնամթերքների և մսի միջոցով, երբ օգտագործում են հում կամ ոչ ճիշտ մշակված (եռացրած) վիճակում): Հատկապես վտանգավոր է ոչխարի և այծի կաթից պատրաստված

չհասունացած թարմ պանիրը: Պանրի մեջ միկրոբները ոչնչանում են 60 օր և ավել աղաջրի մեջ պահելուց հետո, կամ եթե պանիրը պատրաստվել է 5 րոպե եռացրած կամ պաստերիզացված կաթից:

Ըստ վիճակագրության բրուցելյոզով հիվանդ մարդկանց 70.6%-ը վարակվում է մանր եղջերավոր անասուններից, 28.8%-ը խոշոր եղջերավոր անասուններից և 0.6%-ը խոզերից:

Ինչպես պաշտպանվել բրուցելյոզով վարակումից.

- պահպանել անասնապահության վարման անվտանգության և հիգիենայի կանոնները (տես աղյուսակ 4),
- ծննդօգնության ժամանակ օգտագործել ձեռնոցներ,
- պահպանել անասնապահական սննդամթերքի օգտագործման անվտանգության կանոնները (տես աղյուսակ 3):

Մարդը հիվանդանալով բրուցելյոզով դառնում է կենսաբանական փակուղի, այսինքն՝ ուրիշներին չի վարակում: Սակայն երբևէ վարակված լինելը իր հետքն է թողնում մարդու առողջության վրա ու չի բուժվում ողջ կյանքի ընթացքում:

**Բուժում** չկա: Բրուցելյոզի հայտնաբերման դեպքում հիվանդ անասունին պետք է ենթարկել հարկադիր սպանդի (անասնաբույժի հսկողությամբ):